ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0095, Ք.Երևան, Մ.Բաղրամյան պող., 19 Հեռ./ֆաքս՝ + 374 11 513 439

20.05.2019 թ.

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ»
ԿԵՆՏՐՈՆ ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
Շ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ձեր առաջին հարցին ի պատասխան տեղեկացնում ենք, որ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքը 2003 թվականից ի վեր թե՛ դիզայնի և թե՛ ծրագրային ապահովման առումով պարբերաբար կատարելագործվում է Ազգային ժողովի աշխատակազմի քարտուղարության ԱԺ պաշտոնական ինտերնետային կայքի սպասարկման բաժնի աշխատակիցների (այդ թվում՝ ծրագրավորողի) կողմից:

Երկրորդ հարցի առնչությամբ հայտնում ենք, որ 2014-2019 թթ. ընթացքում ևս կայքը վերամշակվել է՝ օրենսդրության նոր պահանջներից ելնելով, ստեղծվել են նոր ծրագրային և տեղեկատվական համակարգեր:

Երրորդ հարցի վերաբերյալ նշենք, որ 2014-2019 թթ. ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքի մշակման, վերամշակման և գործարկման համար ծախսեր չեն կատարվել:

Հարգանքով՝

ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀՐԱՅՐ ՋՈՐՅԱՆ